ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2015
02.2015
03.2015
04.2015
05.2015
06.2015
07.2015
08.2015
09.2015
10.2015
11.2015
12.2015
Դեկտեմբեր

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 22-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2015

Դեկտեմբեր

թիվ 12 (208)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-166-Ն ՀՀ օրենքը

5 «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-196-Ն ՀՀ օրենքը

7 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-197-Ն ՀՀ օրենքը

8 «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-199-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

10 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները որոշ ՍՊԸ-ների տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, որոշ ՍՊԸ-ների գրավատնային գործունեության իրականացման լիցենզիաներ տրամադրելու, ինչպես նաև «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Կոմիտաս» մասնաճյուղի անվանափոխությունը հաշվառելու վերաբերյալ

10 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները ՀՀ ԿԲ կողմից «Քլիրսթրիմ բանկինգ» ընկերության համար բանկային հաշվի բացմանը համաձայնություն տալու, «Արարատբանկ» բաց բաժնետիրական ընկերությանը «ԲԵՍՏ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն, ինչպես նաև «Քրեսնք Գլոբլ Եվրասիա» ՓԲԸ-ին ապահովագրական բրոքերային գործունեության իրականացման լիցենզիա տրամադրելու վերաբերյալ

10 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները որոշ ՓԲԸ-ների և «Ջի Ընդ էյ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի մասնաճյուղերը գրանցելու, «Ֆ.Ի.Կ.Օ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի «Անդրանիկ» մասնաճյուղը գրանցումից հանելու, ինչպես նաև «Բիբլոս բանկ Արմենիա» ՓԲԸ-ի «Վանաձոր» մասնաճյուղի գործունեության դադարեցումը թույլատրելու վերաբերյալ

10 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 արտարժույթի փոխանակման կետի, 1 գրավատան նկատմամբ տուգանք կիրառելու և 4 արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

10 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 280Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 250-Ն որոշումը «Վարդան Մամիկոնյան-1625» ոսկե, «Հայաստանի Հանրապետության 25-ամյակ», «Արշակ Ֆեթվաճյան-150» և «Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյան-125» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

14 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 255-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 300-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

24 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 256-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 102-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

27 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

«Կուտակային կենսաթոշակների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11) **միասնական հաշիվ՝** ըստ «Հարկերի մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքի.»:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 8. Սոցիալական վճարի պարտավորությունների հաշվառումը

1. Սոցիալական վճարի պարտավորությունների հաշվառման նպատակով հարկային գործակալի (գործատուի) կամ սոցիալական վճարները սույն օրենքով սահմանված դեպքերում ինքնուրույն կատարող անձանց համար հարկային մարմնում բացվում են անձնական հաշվի քարտեր: Անձնական հաշվի քարտի ձևը և վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմինը:

2. Սոցիալական վճարի պարտավորությունները մարվում են «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 1-ով սահմանված կարգով:

Սոցիալական վճարի (բացառությամբ ճշտված հաշվարկի ներկայացման արդյունքում առաջացածի) պարտավորությունը տվյալ հաշվետու ժամանակահատվածի համար համարվում է մարված, եթե միասնական հաշվին մուտքագրված գումարները բավարար են այդ հաշվետու ժամանակահատվածի սոցիալական վճարը և տույժը մարելու համար:

Սույն մասի կիրառման իմաստով սոցիալական վճարի ճշտված հաշվարկների ներկայացման արդյունքում առաջացած լրացուցիչ պարտավորությունը հաշվառվում է ճշտված հաշվարկի փաստացի ներկայացման ամսաթվով:

3. Միասնական հաշվին մուտքագրված գերավճարները ենթակա են վերադարձման «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված կարգով:

4. Եթե հարկային գործակալը (գործատուն) ներկայացնում է ճշտված հաշվարկ, ճշտված հաշվարկ ներկայացնելու օրվա դրությամբ հաշվետու ժամանակահատվածում հարկային գործակալից (գործատուից) սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտ համարվող՝ եկամուտ ստացած անձն ազատվել է աշխատանքից (դադարել է նրա հետ կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագիրը), և ճշտված հաշվարկի արդյունքում վերահաշվարկվում է (փոխվում է) աշխատանքից ազատված անձի սոցիալական վճարի պարտավորությունը, ապա փոփոխության արդյունքում առաջացած տարբերությունը հաշվառվում է որպես ճշտված հաշվարկ ներկայացրած գործատուի՝ ճշտված հաշվարկ ներկայացնելու արդյունքում առաջացած լրացուցիչ պարտավորություն:»:

Հոդված 3. Օրենքի ողջ շարադրանքում «կամուրջ» բառը փոխարինել «միասնական» բառով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
15 դեկտեմբերի 2015 թ., Երևան, ՀՕ-166-Ն

---

[*] *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2015 թվականի նոյեմբերի 24-ին (ՀՀՊՏ N 87 (1176), 23.12.15):
[***] *ՀՀՊՏ 1997 N 11, 20.05.97:*

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 81-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին և 3.2-րդ մասերով.

«3.1. Ապահովագրական ընկերությունները պարտավոր են ունենալ գործարար վարվելակերպի կանոններ: Գործարար վարվելակերպի կանոններով պետք է առնվազն կարգավորվեն՝

1) ապահովագրական ընկերության և նրա կողմից առաջարկվող ծառայությունների մասին գովազդը և մարկետինգային գործունեությունը.

2) հաճախորդների հետ կնքվող պայմանագրերին ներկայացվող պահանջները.

3) մինչև պայմանագրի կնքումը, պայմանագիրը կնքելիս և պայմանագրի գործողության ընթացքում հաճախորդներին տրամադրվող տեղեկատվության ցանկը և այդ տեղեկատվության տրամադրման ձևը և կարգը, ինչպես նաև հաճախորդների հետ հաղորդակցման կարգը.

4) հաճախորդների կողմից ապահովագրական ընկերություններին իրենց ապահովագրության դասերի շրջանակներում նոր ապահովագրական ծառայությունների վերաբերյալ առաջարկ ներկայացնելու ու այդ առաջարկի քննարկման ընթացակարգը.

5) հաճախորդների անհատական տվյալների պահպանման և դրանց անվտանգ օգտագործման կարգը.

6) հաճախորդների հետ վարվելակերպի կարգը.

7) հաճախորդներին ապահովագրական հատուցում տրամադրելու կարգը.

8) հաճախորդների իրավունքների պաշտպանությանը վերաբերող այլ հարցեր:

Օրենքով կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ապահովագրական ընկերությունների գործարար վարվելակերպի կանոնների կամ դրանց մի մասի բովանդակության նկատմամբ կարող են սահմանվել մանրամասն պահանջներ:

Գործարար վարվելակերպի կանոնների պահանջները խախտելու դեպքում պատասխանատվությունը սահմանվում է սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով[*], Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով[****] և այլ օրենքներով:

3.2. Ապահովագրական ընկերությունները պարտավոր են հետևել սույն հոդվածի 3.1-ին մասով նախատեսված գործարար վարվելակերպի կանոններին:

Սույն հոդվածի 3.1-ին մասով նախատեսված գործարար վարվելակերպի կանոնների պահանջների՝ ապահովագրական ընկերության կողմից խախտման փաստը դատարանի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից հաստատվելու դեպքում ապահովագրական ընկերությունը պարտավոր է հաճախորդին վճարել երեք հարյուր հազար դրամ:

Սույն մասի երկրորդ պարբերությունը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու՝ հաճախորդի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ:

Այն դեպքում, երբ ապահովագրական ընկերությունների կողմից խախտվել է սպառողի՝ սույն օրենքով սահմանված որևէ իրավունք, սպառողն իրավունք ունի անմիջապես դիմելու դատարան կամ ֆինանսական համակարգի հաշտարարին, իսկ օրենքով նախատեսված դեպքում՝ առևտրային արբիտրաժ:»:

---

[*] *ՀՀՊՏ 2007 N 27 (551), 30.05.07:*

[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2015 թվականի դեկտեմբերի 21-ին (ՀՀՊՏ N 91 (1180), 30.12.15):

[*] *ՀՀՊՏ 1998 N 17 (50), 10.08.98:*

[****] *ՀՀՊՏ 2004 N 69 (368), 21.12.04:*

Հոդված 2. Օրենքի 81-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով.

«5.1. Ֆիզիկական անձ հաճախորդն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու ապահովագրության պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում (այսուհետ՝ մտածելու ժամանակ): Այդ դեպքում ապահովագրության պայմանագիրը համարվում է լուծված ֆիզիկական անձ հաճախորդի կողմից ապահովագրության պայմանագիրը լուծելու մասին ապահովագրական ընկերությանը ծանուցելու օրվան հաջորդող օրվանից, և ապահովագրական ընկերությունը պարտավոր է ֆիզիկական անձ հաճախորդին համամասնական կարգով վճարել պայմանագրի գործողության մնացած ժամկետի համար ապահովագրավճարները: Ապահովագրության պայմանագրի հետ կապված որևէ այլ վճար հաճախորդից պահանջվել չի կարող, բացառությամբ ապահովագրության պայմանագրի հետ կապված կատարած փաստացի ծախսերի, որոնց սահմանափակումները կարող են սահմանվել Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով: Ընդ որում, հաճախորդը ծանուցման հետ պարտավոր է ապահովագրական ընկերությանը վերադարձնել վկայագրի բնօրինակը, ինչպես նաև պայմանագրով նախատեսված ապահովագրական ընկերության տրամադրած այլ փաստաթղթեր:

Մտածելու ժամանակը չի կիրառվում հետևյալ դեպքերում.

1) ապահովագրության պայմանագրի ժամկետը չի գերազանցում մեկ ամիսը, և (կամ) պայմանագրով նախատեսված ապահովագրությունը գործում է մինչև մեկ ամիս ժամկետով.

2) պարտադիր ապահովագրության դեպքում.

3) ապահովագրության պայմանագրի կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում ֆիզիկական անձ հաճախորդը դիմել է ապահովագրական հատուցում ստանալու պահանջով:

Մտածելու ժամանակի ընթացքում ապահովագրության պայմանագիրը միակողմանի լուծելու իրավունքից չօգտվելը չի բացառում ֆիզիկական անձ հաճախորդի իրավունքը՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով միակողմանի լուծելու ապահովագրության պայմանագիրը:

Ֆիզիկական անձ հաճախորդը իրավունք չունի պահանջելու ապահովագրական հատուցում մտածելու ժամանակի ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարի համար հետևյալ պայմանների միաժամանակ առկայության դեպքում.

ա. մտածելու ժամանակի ընթացքում պատահարի մասին նա չի ծանուցել ապահովագրական ընկերությանը,

բ. եթե այդ պատահարը տեղի ունենալուց հետո ֆիզիկական անձ հաճախորդը մինչև մտածելու ժամանակի ավարտը ծանուցել է ապահովագրական ընկերությանը պայմանագիրը լուծելու մասին:»:

Հոդված 3. Օրենքի 84-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ մասով.

«11. Ընկերությունների կողմից հրապարակման ենթակա տեղեկատվության և տեղեկատվության հրապարակման կարգին վերաբերող այլ պահանջներ կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածով լրացվող 81-րդ հոդվածի 3.2-րդ մասի երկրորդ պարբերության, որն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2015 թ., Երևան, ՀՕ-196-Ն

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում[*] լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 1014-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը լրացնել «Օրենքով կարող են սահմանվել պայմանագիրը միակողմանի լուծելու այլ ժամկետներ:» նախադասությունով.

2) 3-րդ մասը «եթե» բառից հետո լրացնել «օրենքով կամ» բառերով.

3) 10-րդ մասը «ուժով,» բառից հետո լրացնել ««Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում,» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2015 թ., Երևան, ՀՕ-197-Ն

[*] *ՀՀՊՏ 1998 N 17 (50), 10.08.98:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2015 թվականի դեկտեմբերի 21-ին (ՀՀՊՏ N 91 (1180), 30.12.15):

«Կուտակային կենսաթոշակների մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին[**]

Հոդված 1. « Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքի 71-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սոցիալական վճարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում սույն օրենքով սոցիալական վճար հաշվարկելու և փոխանցելու (գանձելու) պարտականություն ունեցող անձից (այսուհետ՝ սոցիալական վճար կատարող) ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Մինչև գումարի գանձման վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալը սոցիալական վճար կատարողի գույքի վրա կարող է արգելանք դրվել: Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով արգելանքը դնում է հարկային մարմինը՝ «Հարկերի մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքի 30.2-րդ հոդվածով սահմանված դեպքերում և կարգով:

Սոցիալական վճար կատարողի կողմից գումարը գանձելու մասին որոշումն անբողոքարկելի դառնալու դեպքում գումարը գանձվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»[****] Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխով սահմանված կարգով:

Գանձման ընթացքում սոցիալական վճար կատարողի կողմից պարտավորությունները մարվելու դեպքում գումարը գանձելու մասին որոշումն ուժը կորցրած է ճանաչվում, և գանձումը դադարեցվում է:

Սոցիալական վճար կատարողի կողմից չկատարված՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող սոցիալական վճարի գծով պարտավորությունների գանձման նպատակով հարկային մարմինն իրավունք ունի պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագրով ձեռք բերելու սոցիալական վճար կատարողի պահանջի իրավունքը և ստացված գումարները ուղղելու սոցիալական վճար կատարողի պարտավորությունների մարմանը:

Ընդ որում, հարկային մարմնին է անցնում իրավունքի անցման պահին առկա ծավալով պարտավորության (ներառյալ՝ ապառքը և դրա նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերը) պահանջի իրավունքը, իսկ պահանջի իրացման պահին, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սոցիալական վճարների տույժերի հաշվարկման ժամկետները, կատարվում է պարտավորությունների վերահաշվարկ:

Որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող սոցիալական վճարի գծով պարտավորությունների կատարման ապահովման միջոց՝ հարկային մարմնի և սոցիալական վճար կատարողի միջև կարող է կնքվել գրավի պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով[*****] սահմանված կարգով: Գրավի պայմանագիր կնքվելու դեպքում պարտավորությունները մարելու նպատակով կազմվում է պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
30 դեկտեմբերի 2015 թ., Երևան, ՀՕ-199-Ն

---

[*] *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2015 թվականի դեկտեմբերի 17-ին (ՀՀՊՏ N 91 (1180), 30.12.15):
[***] *ՀՀՊՏ 1997 N 11, 20.05.97:*
[****] *ՀՀՊՏ 2004 N 18 (317), 31.03.04:*
[*****] *ՀՀՊՏ 1998 N 17 (50), 10.08.98:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ՏԻԳՏԱԹ» և «ԽԱՍ-Պրոֆիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները (որոշումներ թիվ 248Ա, 290Ա):
- ***Գրավատնային գործունեության իրականացման լիցենզիաներ են տրամադրվել*** «ՌԵ-ՎԵՐՍ», «Լոմբարդ պլյուս» և «ՄՎՄ-Ֆինանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 254Ա, 288Ա, 289Ա):
- ***Հաշվառվել է*** «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Կոմիտաս» մասնաճյուղի անվանափոխությունը (նոր անվանում՝ «Զեյթուն») (որոշում թիվ 270Ա):
- ***Համաձայնություն է տրվել*** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Քլիրսթրիմ բանկինգ» ընկերության համար բանկային հաշվի բացմանը և սպասարկմանը (որոշում թիվ 278Ա):
- ***«ԲԵՍՏ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Արարատբանկ» բաց բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 286Ա):
- ***Ապահովագրական բրոքերային գործունեության իրականացման լիցենզիա է տրամադրվել*** «Քրեսնք Գլոբլ Եվրասիա» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 287Ա):
- ***Գրանցվել են*** «Հայբիզնեսբանկ», «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների «Հրազդան», «Տերյան», «Տաշիր», «Զեյթուն» և «Զի Ընդ Էյ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Արշակունյաց» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/941Ա, 1/999Ա, 1/1019Ա, 1/1003Ա):
- ***Գրանցումից հանվել է*** «Ֆ.Ի.Կ.Օ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության **«**Անդրանիկ» մասնաճյուղը (որոշում թիվ 1/993Ա):
- ***Թույլատրվել է դադարեցնել*** «Բիբլոս բանկ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Վանաձոր» մասնաճյուղի գործունեությունը (որոշում թիվ 1/1006Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 արտարժույթի փոխանակման կետի, 1 գրավատան նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 4530000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/982Ա, 1/988Ա), 4 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/981Ա, 1/983Ա, 1/991Ա, 1/1007Ա):

ՅԻ ՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 280Ա որոշմամբ 2015 թ. դեկտեմբերի 23-ից ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 8.75%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 10.25%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 7.25%:***

*«Վարդան Մամիկոնյան-1625» ոսկե, «Հայաստանի Հանրապետության 25-ամյակ», «Արշակ Ֆեթվաճյան-150» և «Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյան-125» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2016 թվականի հունվարի 25-ից շրջանառության մեջ դնել «Վարդան Մամիկոնյան-1625» ոսկե, «Հայաստանի Հանրապետության 25-ամյակ», «Արշակ Ֆեթվաճյան-150» և «Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյան-125» արծաթե հուշադրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամների նկարագրությունները, որոնք էսքիզների հետ միասին ներկայացված են Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
8 դեկտեմբերի 2015 թ., N 250-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 250-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Վարդան Մամիկոնյան-1625» ոսկե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված են խաչ, թուր և զարդանախշ: Աջ կողմում՝ «5000 ԴՐԱՄ», իսկ շրջագծով՝ «2016 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրություններն են:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է դրվագ Գ. Խանջյանի «Վարդանանք» գոբելենից: Ֆոնին Մամիկոնյանների տոհմի զինանշանն է՝ արծվի տեսքով: Շրջագծով «ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ 391-451» մակագրությունն է:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 900^0
Քաշը	4,3 գ
Տրամագիծը	18,0 մմ
Որակը	լավացված
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	5000 հատ

Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 3-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 15.12.2015 թ. (ՀՀԳՏ N30 (542)[1], 23.12.2015):

«Վարդան Մամիկոնյան-1625» ոսկե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության 25-ամյակ» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին Արարատ լեռան գրաֆիկական պատկերն է՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «2016» մակագրություններով: Աջ կողմում պատկերված է ՀՀ զինանշանը: Ստորին հատվածում «5000 ԴՐԱՄ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Հուշադրամի դարձերեսին «25 ՏԱՐԻ YEARS» մակագրությունն է ՀՀ դրոշի գունային ֆոնին: Աջ կողմում պատկերված է խաչքար: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» և «ARMENIAN STATEHOOD» մակագրություններն են:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	168,1 գ
Տրամագիծը	63,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	հարթ, համարակալված
Տպաքանակը	300 հատ

էսքիզների հեղինակն է Լուսինե Լալայանը:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Հայաստանի Հանրապետության 25-ամյակ» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Արշակ Ֆեթվաճյան-150» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Ա. Ֆեթվաճյանի «Էրզրումի հայուհին» կտավից դրվագ: Վերին աջ կողմում ՀՀ զինանշանն է, իսկ ներքևում՝ անվանական արժեքի մակագրությունը՝ «100 ԴՐԱՄ»: Ձախ եզրագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «2016» մակագրություններն են:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Ա. Ֆեթվաճյանի դիմանկարը Հայաստանի Առաջին Հանրապետության թղթադրամի ֆոնին և Ա. Ֆեթվաճյանի «Անի. Միջնաբերդի եկեղեցին» կտավից դրվագ: Մակագրություններն են՝ «ԱՐՇԱԿ ՖԵԹՎԱՃՅԱՆ», «ARSHAK FETVADJIAN» և «150 ամյակ»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	28,28 գ
Չափը	28,0 x 40,0 մմ
Որակը	լավացված
Դրամաշուրթը	հարթ
Տպաքանակը	500 հատ

էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Արշակ Ֆեթվաճյան-150» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյան - 125» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Ա. Բաժբեուկ-Մելիքյանի «Լիդան բարձրացրած ձեռքերով» կտավը: Ձախ եզրագծով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 2016», իսկ ներքևում «100 ԴՐԱՄ» անվանական արժեքի մակագրություններն են:


Հուշադրամի դարձերեսին պատկերված են Ա. Բաժբեուկ-Մելիքյանի «Ինքնադիմանկար» և «Կանայք» կտավները: Մակագրություններն են՝ «ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԺԲԵՈՒԿ-ՄԵԼԻՔՅԱՆ», «125 ամյակ» և «ALEXANDER BAZHBEUK-MELIKIAN»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	28,28 գ
Չափը	28,0 x 40,0 մմ
Որակը	լավացված
Դրամաշուրթը	հարթ
Տպաքանակը	500 հատ

Էսքիզների հեղինակն է Լուսինե Լալայանը:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյան - 125» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 300-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ստակեցնել վճարային քարտերի թողարկման, սպասարկման, իրացման հետ կապված բանկերի և քարտապանների մոտ առկա խնդիրները,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետով, 5-րդ հոդվածի 1-ին կետի «բ» և 2-րդ կետի «ե» ենթակետերով և 20-րդ հոդվածի «ե» և «իդ» ենթակետերով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. դեկտեմբերի 8-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 25.12.2015 թ. (ՀՀՊՏ N1 (544), 8.01.2016):

1. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտով գործառնությունների իրականացման կարգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հունվարի 31-ի թիվ 39-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 300-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտով գործառնությունների իրականացման կարգը» (այսուհետ՝ Կարգ) շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը իրենց գործունեությունը համապատասխանեցնում են սույն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետի պահանջներին 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
10 դեկտեմբերի 2015 թ., N 255-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի
դեկտեմբերի 8-ի թիվ 255-Ն որոշմամբ

«Հավելված

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի նոյեմբերի 4-ի
թիվ 300-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՔԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտով գործառնությունների իրականացման և դրանց հետ կապված անվտանգության կանոնները:

2. Սույն կարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից լիցենզավորված և վճարային քարտ թողարկելու և սպասարկելու թույլտվություն ստացած կազմակերպությունների (այսուհետ՝ բանկեր) վրա:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. Սույն կարգում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

1) ***թողարկող***՝ Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտ թողարկող բանկեր,
2) ***քարտապան***՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, որը թողարկողի հետ կնքել է վճարային քարտի թողարկման և սպասարկման համար բանկային հաշվի գրավոր պայմանագիր,
3) ***վճարային քարտի թողարկման և սպասարկման համար բանկային հաշվի գրավոր պայմանագիր*** (այսուհետ՝ Պայմանագիր), որը կնքվում է՝
   ա. կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, կամ

բ. բանկի կողմից հրապարակված՝ վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագիր կնքելու հրապարակային առաջարկին միանալու վերաբերյալ հաճախորդի գրավոր դիմումը բանկի աշխատակցի կողմից հաստատվելու և հաստատված դիմումի բնօրինակը հաճախորդին հանձնվելու միջոցով, կամ

գ. ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ եղանակներով:

Սույն կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով սահմանված պայմանագիրը կամ գրավոր դիմումը հաճախորդին հանձնելը հավաստվում է բանկի օրինակի վրա այդ մասին հաճախորդի կողմից ձեռագիր գրառում կատարելու միջոցով:

4) ***ավտոմատ գանձման մեքենա (այսուհետ՝ ԱԳՄ)***՝ ըստ ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թ. օգոստոսի 16-ի թիվ 209-Ն որոշմամբ հաստատված «Ավտոմատ ինքնասպասարկող սարքերի տեղադրման, շահագործման և դրանց միջոցով ֆինանսական գործառնությունների իրականացման վերաբերյալ կարգով» սահմանված իմաստի,

5) ***ՊՈՍ տերմինալ***՝ էլեկտրոնային սարք, որը նախատեսված է առևտրի և (կամ) սպասարկման կետում վճարային քարտով անկանխիկ գործառնություն կատարելու կամ բանկի և (կամ) վերջինիս տարածքային ստորաբաժանման տարածքում վճարային քարտով կանխիկացման գործառնություն կատարելու համար,

6) ***սպասարկող (merchant)***՝ առևտրի և (կամ) ծառայությունների մատուցման կետ, որը վճարային քարտի սպասարկում իրականացնող բանկի հետ կնքել է պայմանագիր՝ իր կողմից վաճառվող ապրանքների և (կամ) մատուցվող ծառայությունների դիմաց վճարային քարտը որպես վճարամիջոց ընդունելու վերաբերյալ,

7) ***վճարային քարտի սպասարկում (acquiring)***՝ բանկի կողմից մատուցվող ծառայություն, որի արդյունքում ապահովվում է սպասարկողների մոտ վճարային քարտով իրականացված գործառնությունների և դրանց դիմաց հաշվարկների կատարումը, ինչպես նաև բանկի կողմից ծառայությունների մատուցման թույլատրելի տարածքում տվյալ բանկի քարտապանների և (կամ) քարտապան չհանդիսացող հաճախորդների կողմից կանխիկի մուտքագրումը, դրամական միջոցների փոխանցումը և (կամ) դրամական միջոցների կանխիկ տրամադրումը,

8) ***անվանագրում***՝ վճարային քարտի դաջման (էմբոսացման, ինջինիրինգի)՝ մագնիսական ժապավենի վրա և (կամ) միկրոպրոցեսորային հիշողության մեջ տեղեկատվության գրառման ընթացակարգ՝ համաձայն քարտային վճարահաշվարկային համակարգի կանոնների,

9) ***վճարումների գրանցամատյան***՝ փաստաթուղթ կամ փաստաթղթերի ամբողջություն, որը պարունակում է քարտային վճարահաշվարկային համակարգի կանոնով և (կամ) այլ փաստաթղթերով սահմանված ժամանակահատվածի համար վճարային քարտի միջոցով իրականացված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ կազմված պրոցեսինգ իրականացնող իրավաբանական անձի կամ թողարկողի կողմից, որի արդյունքում իրականացնում է վճարային քարտի միջոցով իրականացված գործառնությունների տեղեկատվության հավաքագրում, մշակում և փոխանցում/տրամադրում (պրոցեսինգ) բանկերին և ներկայացվում է էլեկտրոնային և (կամ) թղթային եղանակով,

10) ***էլեկտրոնային մատյան***՝ քարտային վճարահաշվարկային համակարգի կանոնով և (կամ) այլ փաստաթղթով սահմանված ժամանակահատվածի համար վճարային քարտով իրականացված գործառնությունների ժամանակ ԱԳՄ-ի, ՊՈՍ տերմինալի կամ վճարային քարտ սպասարկող այլ տեխնիկական սարքավորման միջոցով ձևավորված էլեկտրոնային փաստաթուղթ կամ փաստաթղթերի ամբողջություն,

11) ***անհատական նույնականացման համար (ՊԻՆ-կոդ)***՝ թողարկողի կողմից տրամադրված քարտապանին նույնականացնող ծածկագիր, որը կիրառվում է քարտապանի կողմից քարտային վճարահաշվարկային համակարգի կանոններով նախատեսված դեպքերում,

12) ***հավաստագրում (ավտորիզացիա)***՝ թողարկողի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից վճարային քարտով գործառնությունների կատարման թույլտվության ստացման գործընթաց,

13) ***նույնականացում***՝ գործընթաց, համաձայն որի վճարային քարտով գործառնությունների կատարման ժամանակ թողարկողի կողմից իրականացվում է քարտապանին տրամադրված ՊԻՆ-կոդի, ստորագրության կամ վճարային քարտային համակարգի կանոնով նախատեսված անձը նույնականացնող այլ ծածկագրի ստուգում, նախապես սահմանված ընթացակարգով,

14) ***հաշվետու ժամանակաշրջան***՝ քարտապանի վճարային քարտով կատարված գործառնությունների ժամանակաշրջան, որի վերաբերյալ բանկը քարտապանին ներկայացնում է քաղվածք,

15) ***քարտապանի կողմից չվավերացված գործարքներ***՝Թողարկողի կողմից քարտապանին տրամադրված քաղվածքում արտացոլված կամ այլ եղանակով քարտապանին հայտնի դարձած գործարքներ, որոնց կատարումը իրականացվել է առանց քարտապանի համաձայնության/թույլտվության,
16) ***օֆլայն գործարքներ***՝վճարային քարտով կատարված գործարքներ, որոնց կատարման համար չի պահանջվում թողարկողի հավաստագրումը,
17) ***օնլայն գործարքներ***՝վճարային քարտով կատարված գործարքներ, որոնք իրական ժամանակում հավաստագրվում են թողարկողի կողմից,
18) ***առանց շփման (contactless) կատարված և քարտապանի նույնականացումը չպահանջող գործարքներ***՝թողարկողի կողմից սահմանված գումարային սահմանաչափը չգերազանցող վճարային քարտով կատարված օնլայն կամ օֆլայն գործարքներ, որոնց կատարման ժամանակ քարտապանը չի նույնականացվում:

4. Սույն կարգում օգտագործվող այլ հասկացությունները կիրառվում են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իմաստով:

ԳԼՈՒԽ 3. ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5. Թողարկողները թողարկում են անձնականացված/նույնականացված վճարային գործիք, որը թույլ է տալիս քարտապանին թողարկողի հետ կնքված համապատասխան Պայմանագրի հիման վրա կատարել վճարային քարտում առկա միջոցների կանխիկացում և/կամ անկանխիկ գործառնություններ:

6. Վճարային քարտերը դասակարգվում են.
1) ըստ քարտապանների.
   ա. ֆիզիկական անձ,
   բ. իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.
2) ըստ տեղեկատվության պահպանման (գրառման).
   ա. մագնիսական,
   բ. միկրոպրոցեսորային (չիպային),
   գ. հիբրիդ (համատեղված),
   դ. վիրտուալ.
3) ըստ վճարման տեսակի (սխեմայի).
   ա. դեբետային,
   բ. հաշվարկային,
   գ. վարկային.
4) ըստ կիրառման միջավայրի.
   ա. իրական միջավայրում կիրառվող,
   բ. վիրտուալ (ինտերնետ) միջավայրում կիրառվող:

7. Բանկը կարող է քարտապանի համար թողարկել հետևյալ տեսակների վճարային քարտեր.
1) ***դեբետային քարտ,*** որը նախատեսված է քարտապանին պատկանող դրամական միջոցների սահմաններում գործառնություններ իրականացնելու համար՝ քարտապանի բանկային հաշվում առկա դրամական միջոցների հաշվին,
2) ***հաշվարկային քարտ,*** որը նախատեսված է քարտապանին պատկանող դրամական միջոցների սահմաններում գործառնություններ իրականացնելու համար՝ քարտապանի բանկային հաշվում առկա դրամական միջոցների և սույն կարգի 8-րդ կետով սահմանված Պայմանագրի հիման վրա թողարկողի կողմից տրամադրված վարկի (օվերդրաֆտի) հաշվին,
3) ***վարկային (կրեդիտային) քարտ,*** որը նախատեսված է քարտապանի կողմից գործառնություններ իրականացնելու համար՝ թողարկողի կողմից քարտապանին տրամադրված վարկային պայմանագրի պայմանների համաձայն վարկային միջոցների հաշվին:

8. Վճարային քարտի վավերապայմաններն են՝
1) վճարային քարտի քարտապանի անուն, ազգանուն (իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր քարտապանի դեպքում՝ իրավասու (լիազորված) անձի անուն, ազգանուն),
2) վճարային քարտ թողարկողի անվանում (ապրանքային նշան),
3) քարտային վճարահաշվարկային համակարգի անվանում (ապրանքային նշան), որին պատկանում է տվյալ վճարային քարտը (սահմանված լինելու դեպքում),

4) վճարային քարտի համար,
5) վճարային քարտի գործողության ժամկետ (սահմանված լինելու դեպքում),
6) քարտապանի ստորագրություն և (կամ) քարտային վճարահաշվարկային համակարգի կանոններով սահմանված այլ տվյալներ (օրինակ՝ CVV2 կամ CVC2):

9. Վճարային քարտի վավերապայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վճարային քարտը համարվում է անվավեր՝ բացառությամբ սույն կարգի 10-րդ կետով սահմանված դեպքերի:

10. Սույն կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված վավերապայմանը կարող է բացակայել, եթե ապահովված է հետևյալ պայմանների ամբողջությունը.

1) վճարային քարտը՝
ա. թողարկվել է ոչ ավելի, քան երկու տարի գործողության ժամկետով՝ միայն ՀՀ դրամով,
բ. կարող է օգտագործվել բացառապես ՊԻՆ-կոդի կիրառմամբ,
գ. ենթակա չէ նույն անձի անունով վերաթողարկման,
դ. ենթակա չէ օգտագործման վիրտուալ (ինտերնետ) միջավայրում՝ բացառությամբ սույն կարգի 18-րդ կետով սահմանված պահանջը բավարարելու դեպքում:

11. Սույն կարգի 10-րդ կետով սահմանված պահանջները բավարարող վճարային քարտը կարող է ձեռք բերվել.

1) ձեռք բերողի կողմից՝ անձնական օգտագործման նպատակով,
2) ձեռք բերողի կողմից՝ երրորդ անձի կողմից օգտագործման նպատակով:

12. Վճարային քարտը սույն կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված նպատակով ձեռք բերելու դեպքում Պայմանագրի կողմ պետք է հանդիսանա վճարային քարտը ձեռք բերող անձը:

13. Վճարային քարտը սույն կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նպատակով ձեռք բերելու դեպքում Պայմանագրի կողմ պետք է հանդիսանա վճարային քարտն օգտագործող անձը:

ԳԼՈՒԽ 4. ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ, ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՎ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

14. Թողարկողն իրավասու է միաժամանակ իրականացնելու վճարային քարտի թողարկում, սպասարկում և տարածում: Վճարային քարտի թողարկումը, սպասարկումը և տարածումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, սույն կարգի և Կենտրոնական բանկի այլ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև քարտային վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված կանոնների համաձայն:

15. Թողարկողը պարտավոր է մինչև քարտապանի հետ Պայմանագիր կնքելը ծանոթացնել նրան վճարային քարտի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև սպասարկումը դադարեցնելու և վճարային քարտով գործառնություններն անվտանգ իրականացնելու հիմնական կանոններին (այսուհետ՝ վճարային քարտով գործառնությունների իրականացման հիմնական կանոններ), որոնք պարտադիր ներառում են՝

1) վճարային քարտի և ՊԻՆ-կոդի և (կամ) անձը նույնականացնող՝ քարտային վճարահաշվարկային համակարգի կանոններով նախատեսված այլ ծածկագրի (ծածկագրերի) տրամադրման, օգտագործման և պահպանման կանոնները,
2) վճարային քարտով իրականացվելիք գործառնությունների տեսակները (եթե քարտային վճարահաշվարկային համակարգի կանոններով առկա են գործառնության կատարման հաճախականության, տեսակների կամ գումարի մեծության սահմանափակումներ, ապա վերջիններս պետք է նույնպես նշված լինեն),
3) վճարային քարտ թողարկողի և քարտապանի պարտավորությունները և նրանց պատասխանատվության չափն ու պայմանները (քարտապանի պատասխանատվությունն իր կողմից չվավերացված գործարքների համար, թողարկողի պատասխանատվությունը քարտապանի նկատմամբ՝ վերջինիս կողմից չվավերացված գործարքների համար, քարտապանի կողմից չվավերացված գործարքների վերաբերյալ թողարկողին տեղեկացման կարգի և պայմանների, պատասխանատվության չափի և վճասների բաշխման, այլ սահմանված ընթացակարգերի վերաբերյալ)՝ հաշվի առնելով սույն կարգով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները,
4) վճարային քարտի բլոկավորման և ապաբլոկավորման կարգն ու պայմանները, ժամկետը ինչպես քարտապանի նախաձեռնությամբ, այնպես էլ բանկի,
5) քարտային/բանկային հաշվից դեբետագրման/ելքագրման կամ քարտային/բանկային հաշվի կրեդիտագրման/մուտքագրման կարգն ու պայմանները, ժամկետը,

6) տեղեկատվություն ցանկացած տիպի միջնորդավճարների վերաբերյալ, որոնք գանձվում են քարտապանից նրան մատուցված ծառայությունների դիմաց, բացառությամբ այն միջնորդավճարի, որը կարող է գանձվել սպասարկողների կողմից՝ քարտապանի սպասարկման պահին: Միջնորդավճարները ներառում են վճարային քարտի տրամադրման և (կամ) տարեկան սպասարկման գումարները, վճարային քարտով գործառնությունների իրականացման համար գանձվող և կիրառվող սակագներ/միջնորդավճարներ կամ այլ վճարներ,
7) քարտապանի կողմից քարտային գործառնության բողոքարկման ժամանակահատվածը, ինչպես նաև բողոքարկման և ճշգրտման ժամանակ կիրառվող ընթացակարգերը և քարտապանի կողմից դրանց կիրառման կարգն ու պայմանները, ժամկետները՝ հաշվի առնելով սույն կարգով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները,
8) քարտային/բանկային հաշվի արժույթից տարբերվող արժույթով (արտարժույթով) գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փոխարժեքի որոշման մեխանիզմը,
9) քարտապանի կողմից վճարային քարտի կորստի/գողանալու դեպքում կիրառվող ընթացակարգերը և դրանց կիրառման կարգը, պայմանները և ժամկետները,
10) վճարային քարտի վերաթողարկման կարգն ու պայմանները, ժամկետները,
11) վճարային քարտային հաշվի փակման դեպքում վճարային քարտի վերադարձման կարգն ու պայմանները,
12) վճարային քարտով իրականացված գործառնությունների դիմաց հաշվարկի ընթացակարգերը, մասնավորապես՝
    ա. Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով քարտապանին դրամական միջոցների տրամադրման կամ կանխիկի մուտքագրման կարգը, պայմանները և ժամկետները,
    բ. համապատասխան դրամական պարտավորությունների վերադարձման (մարման) կարգն ու պայմանները, ժամկետները,
    գ. տրամադրված դրամական միջոցների դիմաց հաշվարկվող տարեկան-անվանական և փաստացի տոկոսադրույքները, տոկոսագումարների հաշվարկման և քարտապանի պարտավորությունների մարման կարգն ու պայմանները, ժամկետները,
13) վճարային քարտով գործառնությունների իրականացման ընթացքում առաջացող ռիսկերի կառավարման և զսպման արդյունավետ մեխանիզմները,
14) վճարային քարտի անվտանգ օգտագործման նվազագույն պայմանները,
15) քարտապանին վերաբերող այլ ընթացակարգեր, որոնցով կարգավորվում են վճարային քարտով կատարված գործառնությունները:

16. Թողարկողի վճարային քարտով գործառնությունների իրականացման հիմնական կանոնները պետք է մշակված լինեն գրավոր, հնարավորության դեպքում նաև էլեկտրոնային եղանակով՝ գրված պարզ, մատչելի հայերեն լեզվով, անհրաժեշտության դեպքում նաև այլ լեզուներով:

17. Թողարկողը պարտավոր է վճարային քարտը և ՊԻՆ-կոդը քարտապանին տրամադրել առանձին փակ ծրարներով: Ընդ որում, քարտը թողարկելուց հետո այն քարտապանին տրամադրելու նպատակով թողարկողի մեկ տարածքային ստորաբաժանումից մեկ այլ տարածքային ստորաբաժանում թողարկողի կողմից կամ երրորդ անձանց միջոցով տեղափոխումը, ինչպես նաև մինչև քարտապանին քարտը և ՊԻՆ-կոդը հանձնելը՝ թողարկողի մոտ դրանք պետք է պահվեն փակ ծրարներով:

18. Քարտապանին և սպասարկողին վիրտուալ (ինտերնետ) միջավայրում վճարային քարտով (բացառությամբ ԱրՔա համակարգում ձևավորված վիրտուալ քարտերի) ծառայություններ մատուցելու հնարավորություն ընձեռելու դեպքում թողարկողը և սպասարկում իրականացնող բանկը պարտավոր են ապահովել միջազգային չափանիշներին համահունչ անվտանգության արդի համակարգի (օրինակ՝ գաղտնագրված փակ բանալիների միջոցով տեղեկատվության փոխանակման 3 d secure, միանգամյա կոդերի ձևավորման և տրամադրման համակարգ) միջոցով քարտապանի և սպասարկողի սպասարկումը՝ վերջիններիս կողմից չվավերացված գործարքներն ի հայտ գալու հնարավորությունը բացառելու նպատակով:

19. Թողարկողը պարտավոր է մշտապես ապահովել վճարային քարտով կատարված գործարքների մոնիտորինգի համակարգի առկայությունը և դրա շուրջօրյա (7/24) սպասարկումը իրական ժամանակում՝ անհրաժեշտության դեպքում զանգահարելու կամ քարտապանի հետ այլ միջոցով կապ հաստատելու արդյունքում կասկածելի գործարքները բացահայտելու նպատակով:

20. Թողարկողը պարտավոր է մշտապես ապահովել վճարային քարտով տեղի ունեցող միջադեպերին (քարտի կորստի, բլոկավորման, չսպասարկման, բանկոմատի կողմից առգրավման և այլ) արագ արձագանքելու ահազանգման համակարգի առկայությունը և դրա շուրջօրյա (7/24) սպասարկումը իրական ժամանակում:

21. Թողարկողը պարտավոր է վճարային քարտով կատարված յուրաքանչյուր գործարքի կատարման վերաբերյալ (առնվազն քարտային հաշվից ելքերի) կարճ հաղորդագրության (էս էմ էս) միջոցով անհապաղ տեղեկացնել քարտապանին՝ քարտապանի կողմից տվյալ ծառայությունից օգտվելու ցանկություն հայտնելու դեպքում: Ընդ որում, խարդախություն/զեղծարարություն տեղի ունենալու դեպքում սույն կարգի 15-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ընթացակարգերով խարդախության/զեղծարարության ռիսկը չի կարող դրվել՝

1) բացառապես քարտապանի վրա, եթե քարտապանը համաձայնվել է, սակայն թողարկողը չի տրամադրել կարճ հաղորդագրության (էս էմ էս) միջոցով անհապաղ տեղեկացման ծառայությունը,
2) բացառապես թողարկողի վրա, եթե կատարված գործարքի վերաբերյալ քարտապանին կարճ հաղորդագրության (էս էմ էս) միջոցով թողարկողի անհապաղ տեղեկացնելուց հետո քարտապանի կողմից չի ձեռնարկվել սույն կարգով, Պայմանագրով կամ վճարային քարտով գործառնությունների իրականացման հիմնական կանոններով սահմանված կանխարգելիչ միջոցառումներ (օրինակ՝ անհապաղ չի հայտնել գործարքն իր կողմից կատարելու կամ չկատարելու մասին):

Ընդ որում՝ սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված դրույթները չեն կիրառվում այն դեպքում, երբ քարտապանին էս էմ էս ծառայության միջոցով գործարքի վերաբերյալ ծանուցումը ժամանակին կամ ընդհանրապես չի տրամադրվել կամ քարտապանը կանխարգելիչ միջոցառումներ չի իրականացրել կապի խափանման կամ հեռահաղորդակցման օպերատորի մոտ ծագած տեխնիկական կամ այլ խնդիրներ առաջանալու հետևանքով:

22. Թողարկողը պարտավոր է քարտապանի կողմից ներկայացված դիմում-պահանջի հիման վրա միջոցների հետ գանձման գործընթաց (Chargeback) նախաձեռնել, այդ թվում իր կողմից թողարկված միջազգային քարտային համակարգերի քարտերով (բացառությամբ այն դեպքերի, երբ քարտային վճարային համակարգի կանոններով միջոցների հետ գանձման գործընթաց (Chargeback) նախաձեռնելու հնարավորություն ընձեռված չէ:

ԳԼՈՒԽ 5. ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

23. Քարտապանն իրեն պատկանող դրամական միջոցների շարժը (մուտքագրումներ և (կամ) ելքագրումներ), այդ թվում՝ վարկային միջոցների, կարող է իրականացնել կանխիկ/անկանխիկ եղանակով՝ Պայմանագրի և (կամ) քարտային վճարահաշվարկային համակարգի կանոնների համաձայն:

24. Քարտապանին տրամադրված մի քանի վճարային քարտերով գործառնությունները կարող են իրականացվել նաև մեկ բանկային հաշվով:

25. Քարտապանին տրամադրված մեկ վճարային քարտով գործառնություններ կարող են իրականացվել նաև մի քանի հաշիվներով:

26. Ֆիզիկական անձ քարտապանի կողմից վճարային քարտով կարող են իրականացվել հետևյալ տեսակի գործառնություններ՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում և դրանից դուրս ստանալ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով կանխիկ դրամական միջոցներ,
2) Հայաստանի Հանրապետության տարածքում վճարել ապրանքների (աշխատանքների, ծառայությունների, մտավոր աշխատանքի արդյունքների) դիմաց Հայաստանի Հանրապետության արժույթով, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ նաև արտարժույթով,
3) Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով այլ գործառնություններ, եթե դրանց կատարման համար օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված չեն սահմանափակումներ:

27. Իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր (այսուհետ՝ իրավաբանական անձ) քարտապանի կողմից վճարային քարտով իրականացվում են հետևյալ տեսակի գործառնություններ՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում տնտեսական գործունեության հետ կապված հաշվարկների, այդ թվում՝ գործառնական և վարչական ծախսերով կատարված հաշվարկների դիմաց Հայաստանի Հանրապետության արժույթով ստանալ կանխիկ դրամական միջոցներ,
2) Հայաստանի Հանրապետության տարածքում տնտեսական գործունեության հետ կապված անկանխիկ հաշվարկների, այդ թվում՝ գործառնական և վարչական ծախսերով կատարված հաշվարկների դիմաց վճարել Հայաստանի Հանրապետության արժույթով,
3) Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով այլ գործառնություններ, եթե դրանց կատարման համար Հայաստանի Հանրապետության օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանափակումներ նախատեսված չեն:

28. Քարտապանը վճարային քարտով կարող է իրականացնել գործառնություններ՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և (կամ) արտարժույթով բացված բանկային հաշիվներով: Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործառնությունները կատարվում են օրենքով, Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:

29. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը ապահովում են:

1) սպասարկողների մոտ վճարային քարտով կատարված գործառնությունների դիմաց հաշվարկների իրականացումը,
2) բանկի կողմից ծառայությունների մատուցման թույլատրելի տարածքում բանկի հաճախորդների և (կամ) հաճախորդ չհանդիսացող քարտապանների կողմից վճարային քարտով փոխանցման գործառնության իրականացում,
3) բանկի կողմից ծառայությունների մատուցման թույլատրելի տարածքում բանկի հաճախորդների և (կամ) հաճախորդ չհանդիսացող քարտապանների կողմից քարտային հաշվին կանխիկի մուտքագրման գործառնության իրականացում,
4) բանկի կողմից ծառայությունների մատուցման թույլատրելի տարածքում բանկի հաճախորդներին և (կամ) հաճախորդ չհանդիսացող քարտապաններին քարտային հաշվից դրամական միջոցների կանխիկ տրամադրման գործառնության իրականացում:

